

## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Շրջակա միջավայրի նախարարի տեղակալ Արամ Մեյմարյանի՝ 2022 թվականի հոկտեմբերի 8-ից 13-ը Ֆինլանդիայի Հանրապետություն (Հելսինկի) գործուղման արդյունքների վերաբերյալ

1. ԳՈՐԾՈՂՎԱԾ ԱՆՁ

Արամ Մեյմարյան

2. ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ

Շրջակա միջավայրի նախարարի տեղակալ

3. ԳՈՐԾՈՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏԸ

Հելսինկի (Ֆինլանդիայի Հանրապետություն)  
2022 թվականի հոկտեմբերի 8-ից 13-ը

4. ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ

«Հայաստանում կենսաբազմազանության ուժեղացված պահպանությունն ու կայուն օգտագործումը եվրոպական չափանիշներին համապատասխան» թվինինգ ծրագիր

5. ԳՈՐԾՈՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Մասնակցություն «Հայաստանում կենսաբազմազանության ուժեղացված պահպանությունն ու կայուն օգտագործումը եվրոպական չափանիշներին համապատասխան» թվինինգ ծրագրի շրջանակներում կազմակերպված ուսուցողական այցին:

6. ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ, ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐ

- Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը գլխավորում էր շրջակա միջավայրի նախարարի տեղակալ Արամ Մեյմարյանը: «Հայաստանում կենսաբազմազանության ուժեղացված պահպանությունն ու կայուն օգտագործումը եվրոպական չափանիշներին համապատասխան» թվինինգ ծրագրի 2-րդ՝ ինստիտուցիոնալ կարողությունների հզորացում բաղադրիչի ներքո ֆինն փորձագետների հետ շարունակական համագործակցության շրջանակներում կազմակերպված ուսուցողական այցի ժամանակ իրականացվել են մի շարք դաշտային այցելություններ ու մասնագիտական քննարկումներ՝ մասնավորապես հնարավորություն է ընձեռնվել ծանոթանալու Ֆինլանդիայի բնության պահպանության ինստիտուցիոնալ համակարգին, կենսաբազմազանության մոնիթորինգի և հաշվետվությունների կազմման փորձին՝ ազգային, եվրոպական Միության և միջազգային համատեքստում, ինչպես նաև կենսաբազմազանության տվյալների հոսքերի կառավարմանը:

- Կազմակերպվել է այցելություն Պորկալա թերակղզում գտնվող բնական տարածք, որը ներկայումս գտնվում է բնության պահպանման գոտու կարգավիճակ ստանալու անցումային փուլում: Որոշ հատվածներ արդեն իսկ ունեն որոշակի պահպանության ռեժիմ: Պատվիրակությանը մանրամասն ներկայացվեց տարածքի հարուստ կենսաբազմազանությունը, պահպանության և ռեկրեացիայի կազմակերպման առանձնահատկությունները, իրականացվեց ծովային թռչունների, ինչպես նաև որոշ կենդանատեսականների (եղջերու, որմզդեղն) դիտարկումներ բնակմիջավայրերում:
- Կարևոր և արդյունավետ հանդիպում է կազմակերպվել Ֆինլանդիայի շրջակա միջավայրի ինստիտուտում (SYKE)՝ տվյալ ինստիտուտի կենսաբազմազանության կենտրոնի տնօրեն Պետրի Ալլորտի, պահպանվող տարածքների բաժնի պետ Կիմմո Սյուրջանենի, կենսաբազմասանության գծով փոժձագետ դոկտոր Յուլկա-Պեկկա Յապինենի միջազգային համագործակցության գծով պատասխանատու՝ Քեթի Փրիթսիի և այլ մասնագետների հետ:
- Հանդիպման ընթացքում հայ մասնագետներին ներկայացվեց բնության հատուկ պահպանվող տարածքների կառուցվածքը և կառավարման ֆիննական փորձը, SYKE-ի դերը կենսաբազմազանության մոնիտորինգի համակարգում Ֆինլանդիայում և միջազգային համատեքստում, Ֆինլանդիայում կենսաբազմազանության ոլորտում կառավարման գործող համակարգի զարգացման ուղին:
- Կազմակերպվել է նաև դաշտային այցելություն քաղաքային պահպանվող տարածք, ինչպես նաև Ֆինլանդիայի բնության պատմության թանգարան (LUOMUS), որտեղ մասնագիտական թիմին ներկայացվեց ինչպես թանգարանի ցուցադրության հատվածը, այնպես էլ գենոֆոնդ հանդիսացող թանգարանային ամբողջ հավաքածուն, և թվայնացման պրակտիկ գործընթացը LUOMUS-ի Կենսաբազմազանության ինֆորմատիկայի բաժնում: Բավական մանրամասն ներկայացվեց նաև կենսաբազմազանության ֆիննական տեղեկատվական կենտրոնի գործունեությունը, տվյալների հոսքերի կառավարման սկզբունքները, գաղտնի և օգտագործման համար սահմանափակ տվյալների դասակարգումը և սկզբունքները, պետական կառավարման մարմինների կողմից վարվող տվյալների միասնական պորտալը, տվյալների հարցման մեխանիզմները՝ մասնավորապես օգտագործման համար սահմանափակ տվյալների մասով, քննարկվեցին տվյալների որակի հետ կապված հարցեր:
- Հայկական պատվիրակության ներկայացուցիչների կողմից ներկայացվեցին Հայաստանում գործող տեղեկատվական հոսքերի առկա իրավիճակը և մեխանիզմները, որոնք ենթադրում են համապարփակ կառավարման անհարաժեշտություն: Քննարկվեց նաև Հայաստանում նմանատիպ տեղեկատվական պորտալի ձևավորման հնարավորությունը:
- Կազմակերպվեց այցելություն Հելսինկիի Բուսաբանական այգի, որը հանդիսանում է անհետացման եզրին գտնվող մի շարք բույսերի պահպանավայր:
- «Նուկսիո» ազգային պարկի տարածքում դաշտային այցելությունից զատ, հայկական պատվիրակությունը հյուրընկալվեց այցելուների կենտրոնում, որը հանդիսանում է նաև բարձր որակ ապահովող էկոլոթական կենտրոն:

Նշված կենտրոնում կազմակերպվեց նաև հեռավար հանդիպում Ֆինլանդիայի բնության հատուկ պահպանվող տարածքների կառավարման ծառայության ներկայացուցչի հետ: Քննարկվեցին Ծառայության գործառույթները, ընդհանուր 9,892 քմ տարածք զբաղեցնող 41 ազգային պարկերի կառավարման մոտեցումները մեկ կենտրոնի կողմից, ինչպես նաև ֆինանսավորման սկզբունքներն ու աղբյուրները:


**7. ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ**

Ուսուցողական այցի արդյունքների ամփոփման ընթացքում կողմերը փոխադարձ ընդգծել են, որ մեր երկրների միջև առկա է երկարաժամկետ համագործակցության և փորձի փոխանակման բավականին լայն հեռանկար: Կենսաբազմազանության ոլորտի կառավարման համակարգի ֆիննական փորձը հանդիսանում է հեռանկարային կիրառելի մոդել Հայաստանի համար՝ համադրելով ներկայիս գործող կառավարման համակարգի արդյունավետ տարրերի հետ:

«Հայաստանում կենսաբազմազանության ուժեղացված պահպանությունն ու կայուն օգտագործումը եվրոպական չափանիշներին համապատասխան» թվինինգ ծրագրի ինստիտուցիոնալ բաղադրիչի շրջանակներում ֆինն փորձագետների կողմից մշակված Հայաստանի կենսաբազմազանության կառավարման փուլային մոդելը հնարավոր կլինի իրագործել սերտ համագործակցության արդյունքում: Այցը խթան կհանդիսանա հայ-ֆիննական կապերն ամրապնդելու և շրջակա միջավայրի ոլորտում երկկողմ հետաքրքրություն ներկայացնող հարցերի օրակարգի ընդլայնման և համատեղ նոր ծրագրերի իրականացման համար:

Այցի ընթացքում փաստաթղթեր չեն ստորագրվել:

Շրջակա միջավայրի նախարարի տեղակալ



Արամ Մեյմարյան  
18.10.2022թ.